

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխվող հոդվածների**

(...)

**Հոդված 35. Կալանավորված անձանց նկատմամբ կիրառվող տույժի միջոցները և դրանք կիրառելու կարգը**

Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձի նկատմամբ կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները.

1) նկատողության հայտարարում.

2) պատժախուց տեղափոխելը մինչև տասն օր, իսկ անչափահասներին՝ մինչև հինգ օր ժամկետով:

Սույն հոդվածով սահմանված տույժի միջոցները կիրառվում են կալանավորվածներին պահելու վայրի պետի պատճառաբանված որոշմամբ:

Կալանավորված անձի նկատմամբ տույժի միջոցներ կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, տույժի միջոցի կիրառմամբ հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու ողջամիտ անհրաժեշտությունը, նրա անձը և վարքը՝ մինչև խախտումը կատարելը: Կիրառվող տույժի միջոցը պետք է համապատասխանի կատարված խախտման ծանրությանը և բնույթին: Տույժի միջոցը կիրառվում է բացառապես խախտումը կատարած անձի նկատմամբ՝ խախտումը հայտնաբերելուց հետո անհապաղ կամ ոչ ուշ, քան տասն օրվա ընթացքում: Մեկ խախտման համար արգելվում է մեկից ավելի տույժի միջոցներ նշանակելը: Տույժի միջոցները կիրառելիս նշվում են կարգապահական խախտում հանդիսացող արարքը, տույժի միջոցը և դրա տևողությունը. այդ մասին տեղեկացվում է կալանավորված անձը:

Մինչև տույժի միջոց նշանակելը կալանավորված անձից վերցվում է զրավոր բացատրություն, իսկ եթե նա դրանից հրաժարվում է, ապա այդ մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

Պատժախուցի բուժկանխարգելիչ հաստատություններ տեղափոխված կալանավորված անձին նշված բուժհաստատությունում պահելու ժամանակը հաշվվում է տույժի կրման ժամանակի մեջ:

Կալանավորված անձի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: Բողոքարկումը տույժի միջոցի կիրառումը չի կասեցնում:

**Հոդված 36. Պատժախցում կալանավորված անձանց պահելու առանձնահատկությունները**

Կալանավորված անձինք պատժախցում պահվում են միայնակ:

Կալանավորված անձինք տեղափոխվում են պատժախուց՝ այդ նպատակով նախատեսված գրանցամատյաններում պարտադիր նշելով պատժախցում պահելու ժամկետը:

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձինք անկողնային պարագաներով ապահովվում են քնի համար սահմանված ժամերին:

Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց կարող են արգելվել՝

1) դրամական փոխանցումներ ստանալը և կատարելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի,

2) հանձնություններ, ծանրոցներ ու փաթեթներ ստանալը և ուղարկելը, բացառությամբ առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու դեպքերի,

3) քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը,

4) տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի,

5) հեռախոսակապից օգտվելը:

~~Պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձանց արգելվում են նամակագրությունը, տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի և փաստաբանի կամ պաշտպանի հետ տեսակցությունների, լրացուցիչ սննդամթերք, առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելը, ծանրոցներ, հանձնություններ ստանալը, դրամական փոխանցումներ կատարելն ու ստանալը, հեռուստադիտումները, սեղանի խաղերից օգտվելը:~~

Պատժախցում պահվող կալանավորված անձինք օգտվում են ամենօրյա՝ առնվազն մեկ ժամ տևողությամբ զբոսանքի իրավունքից:

Կալանավորված անձանց կողմից առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացնելն իրականացվում է սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

Պատժախցում պահվող կալանավորված անձինք գտնվում են բժշկական հսկողության ներքո:

Կալանավորվածներին պահելու վայրի պետն իրավունք ունի հետաձգել պատժախուց տեղափոխելու ձևով տույժի կիրառումը, կրճատել տույժի ժամկետը կամ վաղաժամկետ ազատել տույժի կրումից՝ բժշկական եզրակացության հիման վրա կամ այլ հիմքով: Եթե հետաձգված ժամանակամիջոցում կալանավորված անձը նոր խախտում չի գործել, նա կարող է ազատվել տույժի կրումից:

Պատժախցում պահվող կայանավորված անձանց նկատմամբ սույն հոդվածով չնախատեսված սահմանափակումներ կիրառելն արգելվում է:

Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում կայանավորված անձանց արգելվում է աշխատելու: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումները կիրառվում են տույժի միջոց կիրառելու մասին կայանավորվածներին պահելու վայրի կամ նրա պարտականությունները կատարող անձի պատճառաբանված որոշմամբ: Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում կարող է կիրառվել սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված մեկից ավելի սահմանափակում:

Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված յուրաքանչյուր սահմանափակումը կիրառելիս պետք է հիմնավորվի պատճառական կապը կատարած խախտման և կիրառվող սահմանափակման միջև:

*(36-րդ հոդվածը լրաց. 08.04.08 ՀՕ-16-Ն, 21.12.15 ՀՕ-191-Ն)*